**Արձանագրություն N 5**
**«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«22» փետրվարի 2019թ.
ժամը՝ 15:00

| | |
|---|---|
| Մասնակցում էին՝ | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Կ. Գասպարյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Լ. Հարությունյանը, Լ Ոսկանյանը, և Ա. Պապյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մկրտչյանը |
| Բացակայում է՝ | Ն.Մեսրոպյանը |

**1. Գնանշման հարցում ընթացակարգի ստացված փաստաթղթերի մասին**

(Կ. Գասպարյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է հարցման եզրակացությունը, համաձայն որի «Արմստրոյ» ՍՊԸ-ն և «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, իսկ «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ի մասով ՀՀ ՊԵԿ հարկային ծառայությունը Արցախի հանրապետության հարկ վճարողների վերաբերյալ հաշվառում չի վարում:

2. «Արմստրոյ» ՍՊԸ-ի, «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի և «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջված որակավորման չափանիշները հիմնավորող իրավերով նախատեսված փաստաթղթերը՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի), դրա հաշիվ ապրանքագրերի պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն) պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

**2. Գնանշման հարցում ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին**

(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը քարտուղարը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակները, Կոմիտեից ստացված եզրակացությունը և որակավորման չափանիշները հիմնավորող իրավերով նախատեսված փաստաթղթերը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Արմստրոյ» ՍՊԸ-ի, «Հայդի Քոնսալթ» ՍՊԸ-ի և «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ի հայտերը գնահատել <<Բավարար>>:

2. ընտրված /հաղթող/ մասնակիցներ ճանաչել՝

**1-ին, 6-րդ և 8-րդ** չափաբաժինների մասով՝ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ին,

**2-րդ, 4-րդ և 7-րդ** չափաբաժինների մասով ՝ «Արմստրոյ» ՍՊԸ-ին,

**3-րդ և 5-րդ** չափաբաժինների մասով «Հայդի Քոնսալթ» ՍՊԸ-ին:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր սահմանված անգործության ժամկետի (5 օրացուցային օր) լրանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ Ա. Գասպարյան

Անդամներ՝ Լ. Հարությունյան

Լ. Ոսկանյան

Ա. Պապյան

Քարտուղար ՝ Ա. Մկրտչյան